Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջի

1. **«Ցածր լարման էլեկտրական ապարատների տեղակայման կարգաբերման և փորձարկման գործողություններ», «Ցածր լարման էլեկտրական ապարատների շահագործման, սպասարկման և նորոգման գործողություններ» և «Ուսումնական պրակտիկա՝ էլեկտրական ցանցեր և համակարգեր», «Արտադրական պրակտիկա՝ Ցածր լարման էլեկտրական ապարատների տեղակայման կարգաբերման և փորձարկման գործողություններ» 1 դրույք ծանրաբեռնվածությամբ,**

2. **«Իրավունքի հիմունքներ» 0,35 դրույք ծանրաբեռնվածությամբ,**

3. **«Անվտանգություն և առաջին օգնություն», «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», «Հաղորդակցություն» 0,825 դրույք ծանրաբեռնվածությամբ,**

4. **«Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ», «Պատմություն» 0,79 դրույք ծանրաբեռնվածությամբ,**

5. **«Կետային գրաֆիկա», «Վեկտորային գրաֆիկա» և «Ինֆորմատիկա» 0,9 դրույք ծանրաբեռնվածությամբ,**

6. **«Պարենային ապրանքների դասակարգումը և սպառողական հատկությունները», «Ապրանքների սպառողական հատկությունների հետազոտման համար օգտագործվող տեխնիկական միջոցների կիրառման հմտություններ», «Ապրանքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևերը», «Ապրանքի սպառողական հատկությունների ձևավորման պայմանները և դրանց փոփոխման վրա ազդող գործոնները», «Հատիկա-ալրային ապրանքների արտադրության տեխնոլոգիական գործընթացը», «Կաթի և կաթնամթերքի արտադրության տեխնոլոգիական գործընթացը», «Հատիկա-ալրային ապրանքների փորձաքննությունը» 1 դրույք ծանրաբեռնվածությամբ** առարկաների դասախոսի թափուր աշխատատեղի համար:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Մասնակիցը հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը, վիճակահանությամբ ընտրում է հարցատոմս, որը բաղկացած է հինգ հարցից, որում կարող են ներառվել նաև 1-3 գործնական հարցեր և կարող է անձին տրվել մինչև հինգ հարակից հարց, որոնք նույնպես առնչվում է առաջադրանքին:

Հաստատության տվյալ թափուր տեղի մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝

1) հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,

2) մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է ներքոնշյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Հաստատության տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը, վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից,

3) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված

այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը,

4) դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Փաստաթղթերը ներկայացնել «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի վարչական մասնաշենք, ընդհանուր բաժին, Տիգրան Մեծի 36 հասցեով սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 20-ը ներառյալ (բացառությամբ շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերի)՝ ժամը 10^{00}-17^{00}-ն, ընդմիջում՝ ժամը 12^{45}-13^{45}-ը:

Մրցույթը տեղի կունենա 2026թ. օգոստոսի 25-ին, ժամը համապատասխանաբար 11:00-ին, 12:00-ին, 14:00-ին, 15:00-ին, 16:00-ին, 17:00-ին ՀՀ Լոռու մարզի Վանաձորի պետական համալսարանում, հասցեն՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36:

Կոնտակտային տվյալներ՝ էլ. հասցե info@vsu.am, հեռախոս՝ +322 4-63-87: